Life Under Double Discrimination: How LGBT Women Live in Armenia
Author: Lusine Voskanyan
Published in Ankakh Weekly, 15.09.2017
Available only in Armenian

Կյանքը կրկնակի խտրականության պայմաններում. ինչպես են ապրում ԼԲՏ կանայք Հայաստանում

Հեղինակ՝ Լուսինե Ոսկանյան

Հրապարակվել է Անկախ շաբաթաթերթում, 15.09.2017

Չնայած վերջին տարիներին իրավապաշտպան կազմակերպությունների ակտիվ աշխատանքին, լեսբի, գեյ, բիսեքսուալ և տրանս մարդիկ շարունակում են խտրականության ենթարկվել, ամեն օր առնչվել իրենց հասցեին ատելության կոչերին և

սպառնալիքներին: ԼԳԲՏ անձանցից քչերն են ռիսկի դիմում և բացահայտում իրենց ինքնության այդ մասը: Ավելին՝ ԼԲՏ կանայք ՀՀ-ում խտրականության են ենթարկվում ոչ միայն սեռական կողմնորոշման, այլև սեռային պատկանելության համար: «Անկախը» զրուցել է այդ խմբերի ներկայացուցիչների հետ՝ փորձելով հասկանալ, թե ինչպես են նրանք ապրում և պայքարում մարտահրավերներին դիմագրավելու համար:

Լիլիթ Ավետիսյան. «ՀՀ-ում ավելի շատ որպես կին եմ խտրականության ենթարկվում, քան որպես բիսեքսուալ անձ»

Լիլիթ Ավետիսյանը մասնագիտությամբ հոգեբան է: Երկար տարիներ աշխատում է «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» ՀԿ-ում («Փինք Արմենիա»): Ներկայումս մասնագետների համար սեռական կողմնորոշման, գենդերային ինքնության հարցերի մասին դասընթացներ է կազմակերպում: Արդեն 4-րդ տարին է, ինչ սովորում է ասպիրանտուրայում: Ատենախոսությունը գրում է սեռական կողմնորոշման և սեռական

ինքնության մասին: Լիլիթը երկսեռական է (բիսեքսուալ): 17 տարեկան էր, երբ գիտակցեց դա, թեև կանանցով հրապուրվելու դեպքեր ավելի վաղ եղել էին:

Մանկական սերեր եղել էին նաև տղաների նկատմամբ. «17 տարեկան էի, երբ հասկացա, որ զգացմունքային և սեռական ցանկություններ ունեմ կանանց նկատմամբ, իմացա՝ դա ինչ է, որ այդպիսի մարդիկ կան, որ դա անուն ունի, բայց էլի չէի ընդունում: Կոնֆլիկտներ ունեի ինքս ինձ հետ: Դա ինքնամերժման փուլի հանգեցրեց»,- հիշում է նա: Դա տևեց մինչև 19 տարեկանը, երբ սիրահարվեց համակուրսեցուն: Դա Լիլիթի համար ամենածանր շրջանն էր, երբ անգամ մտածում էր ինքնասպանություն գործելու մասին: Ճգնաժամը հաղթահարելու համար սկսեց այցելել հոգեբանի, ինչի շնորհիվ լարվածությունը թուլացավ, սկսվեց ընդունման շրջանը. «Ի վերջո, այդ աղջկան ասացի զգացմունքներիս մասին: Նրա արձագանքը դրական էր: Դրա մեջ բացարձակ խնդիր չէր տեսնում, ասաց, որ պարզապես հետաքրքրություն չունի կանանց նկատմամբ: Ու շնորհակալություն հայտնեց անկեղծությանս համար»:

Լիլիթն իր ինքնությունն առաջինը բացահայտել է մյուս ընկերուհուն: Հիմա էլ այդ մասին գիտեն միայն ամենամոտ ընկերները: Ընտանիքում տեղյակ չեն, թեև գիտեն, որ զբաղվում է ԼԳԲՏ մարդկանց խնդիրներով: Լիլիթի խոսքով՝ հարմար առիթ դեռևս չի եղել. «Ծնողներս իմացել են իմ տղամարդ զուգընկերների մասին, իսկ կանանց մասին՝ ոչ: Կարծում եմ՝ նրանք ենթադրում են, որ ես բիսեքսուալ եմ: Ծնողներիցս մեկը վերջերս հարցրեց՝ կարո՞ղ ա դու էլ, ու միանգամից փակեց թեման: Ես անգամ չհասցրի պատասխանել, որովհետև քննարկումը փակված էր: Ենթադրում եմ, որ ինչ-որ բաներ հասկանում են, բայց նրանց մոտ մերժման փուլն է»: Ընտանիքից իր կյանքի այդ մասը թաքցնելն ամենից դժվարն է Լիլիթի համար. «Երբ ընկերուհուս հետ հանդիպում էինք, ընտանիքիս անդամները մտածում էին, որ պարզապես ընկերներ ենք: Շատ ճնշող է, երբ իմ կյանքի կարևոր մասը պարզապես փակում եմ ընտանիքից: Իմ զուգընկերուհուն ընտանիքս ընկալել է որպես լավ ընկերուհի: Ես դա չեմ ուզում: Մեր հարաբերությունները անկեղծ են, բայց մինչև այն պահը, երբ դրանք առնչվում են ընտանիքին, սոցիումին: Այդ պահերին ուղղակի խաղում ես: Իսկ դա ինձ համար ճիշտ չէ»:

Բիսեքսուալ լինելը լրացուցիչ լարվածություն է ստեղծում: Անգամ նույնասեռական և տրանս մարդկանց մոտ դա ընկալվում է որպես անցումային փուլ. «Դժվար է մարդկանց բացատրել, թե ինչ է բիսեքսուալությունը: Հիմա դա անում եմ գիտական տերմիններով և սահմանումներով: Առաջարկում եմ հիշել, թե ում են սիրահարվել վերջերս: Ոմանք նման հույզեր ունենում են տղամարդկանց նկատմամբ, ոմանք՝ կանանց, որոշ մարդիկ էլ կարող են և՛ կանանց , և՛ տղամարդկանց նկատմամբ ունենալ զգացմունքներ: Բիսեքսուալություն չի նշանակում ունենալ զգացմունքներ միանգամից երկուսի նկատմամբ: Կախված է նրանից, թե ում կհանդիպես կյանքում»:

Մինչև այժմ Լիլիթի զուգընկերները հասկացել են նրան: 20-21 տարեկանում նա հանդիպում էր մի տղամարդու հետ: Պատրաստվում էին ամուսնանալ: Լիլիթը պատմում է նրան իր կողմնորոշման մասին, ինչին արձագանքը լինում է ադեկվատ՝ լավ: Հետագայում նրանք բաժանվում են այլ խնդիրների պատճառով: Համալսարանում երբեք չի խոսել իր կողմնորոշման մասին: «Չնայած բիսեքսուալ լինելու պատճառով չեն հանդիպել խտրականության կոնկրետ դեպքեր, բայց ինձ մոտ անընդհատ առկա է ներքին զգուշավորության ու լարվածության զգացումը: Անընդհատ լարված ես, որ հիմա, մեկ է, մի բան կասի ու կանի, երբ գիտես, որ գիտեն քո կողմնորոշման մասին: Իսկ անընդհատ այդ ամենի մեջ ապրելը հաճախ սպառում է մարդուն»: Ատենախոսությունը գրելիս Լիլիթը զգացել է, որ շատ դժվարությամբ է կարդում այն նյութերը, որոնք վերաբերում են այն հարցին, թե արդյոք հոմոսեքսուալ դառնում են, թե՝ ծնվում: Առավել ծանր էր կարդալ «բուժման» մասին նյութերը. «Երբեմն գիտական քննարկումներն են դժվար, երբ խոսում են այն մասին, որ նույնասեռական լինելը հիվանդություն է, երբ վաղուց դա այդպես չի ընկալվում աշխարհում, իսկ ՀՀ-ում այդ քննարկումները դեռ կան: Դա կրկնակի ցավ է պատճառում ինձ և՛ որպես մասնագետի, և՛ որպես անձի»:

Երիտասարդ գիտնականը խոստովանում է, որ Հայաստանում ավելի շատ որպես կին է խտրականության ենթարկվում, քան որպես բիսեքսուալ անձ: Դա կարող է լինել և՛ գիտական ասպարեզում, և՛ ընտանիքում. «Խոսքն անհավասար վերաբերմունքի մասին է, կանանց թերագնահատելու: Կնոջ մասին պատկերացումներն այն են, որ նա ինքնուրույն չէ, ընտանիքում գլխավորը չէ, ֆինանսներով չի կարող զբաղվել, խելացի չէ և այլն: Իմ միջավայրում ես կարողացել եմ դա փոխել: Հետաքրքիր է, որ հիմա անգամ հարազատների միջավայրում այդ հայացքով ինձ չեն նայում, այլ բնութագրիչներ են տալիս: Կարծում եմ՝ կյանքիս ինչ-որ փուլում եղել է նաև ընդվզման պահը որպես կին, երբ կարիք եմ ունեցել մարդկանց ապացուցելու, որ կարող եմ ինքնուրույն լինել: Դա էլ իր հերթին նպաստել է, որ ինքնուրույնանամ և կայունանամ: Ես ապացուցել եմ, որ կինը հաջողությամբ կարող է զբաղվել գիտությամբ, լինել ինքնուրույն, կայուն և ֆինանսապես անկախ»:

Լիլիթը համոզված է՝ ԼԳԲՏ անձանց նկատմամբ վերաբերմունքը ժամանակի ընթացքում կփոխվի. «Դա կլինի այն ժամանակ, երբ մարդիկ կսկսեն իրար հարգել: Ինձ համար կարևոր է մարդը, կարևոր է, որ նրան հարգեն՝ անկախ նրանից՝ ինչ հատկություններ ունի, ինչ սոցիալական խմբում է: Սկիզբը դա պետք է լինի, որ փոքր-փոքր քայլերով մտնի մարդկանց հարաբերությունների մեջ, ես փոխեմ դա իմ միջավայրում, մյուսը՝ իր

միջավայրում: Իհարկե, սա նաև ուտոպիստական մի բան է, բայց յուրաքանչյուր մարդ կարող է այդ ներդրումն անել իր չափով»:

Եվ չնայած բոլոր մարտահրավերներին՝ Լիլիթը չի մտածում Հայաստանից հեռանալու մասին. «Ես չեմ ուզում հեռանալ, որովհետև սա այն վայրն է, որտեղ ես մեծացել եմ, որը ես սիրում եմ, որտեղ կան լիքը անարդարություններ, բայց հասկանում եմ, որ աշխարհի մնացած մասերում էլ կան խնդիրներ, գուցե այլ տեսակի, բայց կան: Ինձ համար կարևոր է Հայաստանում ապրելը, որ կարողանամ ինչ-որ բան փոխել: Որքան էլ ամեն ինչ վատ է այստեղ՝ սա իմ տունն է»:

Անի. «Երբ Հայաստանում ասում ես, որ գեյ ես, խաչ ես քաշում երեխա ունենալու վրա»

«Այնպես չի լինում, որ դու մի օր վեր ես կենում ու ասում՝ ասա՛, հասկացա, ես լեսբի եմ: Շատ փոքր ժամանակից նշաններ են լինում, որոնք մեծ տարիքում վերլուծելուց հետո ես միայն հասկանում»,- պատմում է Անին (անունը փոխված է): Սեռահասունացման տարիքում նրա համար միշտ գրավիչ էր կնոջ կերպարը, և նա չէր հասկանում, որ դա ինչ-որ նշանակություն ունի: Առաջին անգամ հասկացավ, որ լեսբի է, երբ սիրահարվեց աղջկա:

«Սեռական կողմնորոշումը բնածին է, այն չի կարող կոնֆլիկտի հասցնել: Հասարակությունն ինքն է արհեստականորեն ստեղծում այդ կոնֆլիկտը: Դեռահաս տղային կարող են ասել, որ ինքը փչացած է միայն նրա համար, որ ունի կանացի շարժուձև: Երբ քեզ նման բաներ են ասում, իհարկե, քո մեջ կոնֆլիկտ է առաջանում: Եթե քո աչքերը կապույտ են՝ դա շատ վատ է: Բոլորի աչքերը սև են, ո՞նց են քո աչքերը կապույտ: Խայտառակություն, ամոթ է: Մենք հայ ենք, ինչպե՞ս կարող է դա լինել»:

Անիի դեպքում ճնշում չի եղել, որովհետև նա շատ կանացի է: Նրա արտաքին տեսքից հնարավոր չէ դատել սեռական կողմնորոշման մասին. «Ես այդ խնդիրը չեմ ունեցել, պարզապես ոչ մեկին իմ անձնական կյանքի մասին չեմ պատմում, ու վերջ»:

Անին ծնունդով Վանաձորից է, ավարտել է բուհերից մեկի լրագրության ֆակուլտետը: Ասում է՝ բախտը բերել է, քանի որ լրագրության ոլորտը համեմատաբար ազատ միջավայր է: Սակայն անգամ այդ պարագայում նա խուսափում է խոսել իր սեռական կողմնորոշման մասին: «Եթե չեն ասում՝ դրանց բոլորին պետք է վառել, ասում են՝ ինչո՞ւ է պետք դրա մասին խոսել: Մարդիկ չեն մտածում, որ սեռական կողմնորոշումը ոչ միայն անկողինն է, այլև մարդկային հարաբերություններն ու ընտանիքը: Այն չի դիտարկվում որպես ինքնության մաս, այլ դիտարկվում է որպես ամոթալի սեռական այլասերվածություն»: Անիի նույնասեռական լինելու մասին միայն մտերիմ ընկերները գիտեն, քանի որ ընտանիքը խիստ ավանդապաշտ է, իսկ երեխաների և ծնողների կապը շատ սահմանափակ է, ինչպես հայկական շատ ընտանիքներում: Բավականաչափ վստահելի միջավայր չկա, որտեղ մարդը կարող է խոսել սուր թեմաների մասին: «Բազմաթիվ դեպքեր են եղել, երբ ծնողները երեխաներին տնից դուրս են շպրտել, ասում են՝ դու մեր ազգը խայտառակել ես: Անձը պետք է պատրաստ լինի դրան: Դա շատ մեծ

սթրես է, որն իր հետ բերում է մեծ փոփոխություններ: Այնպես չի, որ դու ասում ես՝ գիտե՞ք, իմ աչքերը կապույտ են, նրանք էլ ասում են՝ լավ, ու մենք անցնում ենք առաջ: Նախ պետք է այդ կռվի փուլը անցնել ու սկսել ծնողների հետ աշխատել, նրանց բացատրել՝ դա ինչ է, որ դա ամոթ բան չէ»:

Տարբեր հետազոտությունների համաձայն՝ ԼԳԲՏ անձինք կազմում են ամբողջ աշխարհի բնակչության 8-10 տոկոսը: Սակայն, Անիի խոսքով, Հայաստանում մարդիկ ոչ միայն այդ մասին չեն խոսում, այլև չեն էլ հասկանում շատ ժամանակ, որ իրենք էլ ԼԳԲՏ անձ են: Նման դեպքերի բազմիցս ականատես է եղել:

Նա դեռ վերջնական որոշում չի կայացրել՝ ցանկանո՞ւմ է երեխա ունենալ, թե ոչ. «Երբ Հայաստանում ասում ես՝ գեյ ես, խաչ ես քաշում երեխա ունենալու վրա: Հասարակությունը քո երեխային ապահով միջավայրում չի թողնում: Դա ահռելի պատասխանատվություն է, որովհետև երեխային հաստատ մի բան կպատահի, ու դու ինքդ քեզ կմեղադրես դրանում»: Եթե Անին որոշի երեխա ունենալ՝ կհեռանա Հայաստանից. «Գնալը շատ ծանր է: Դու մի տեղ մեծանում ես, մի միջավայր ձևավորում ու հետո միայն այն պատճառով, որ բոլորը հետաքրքրվում են քո սեռական կյանքով, պիտի թողնես գնաս, որովհետև քեզ ոչ ոք թույլ չի տա հանգիստ ապրել, թեև դու ոչ ոքի չես խանգարում»:

Ըստ նրա՝ նույն խնդրի պատճառով ՀՀ-ից հեռանում են ոչ միայն նույնասեռական մարդիկ. «Աղջիկներն են շատ գնում, որովհետև ազատության քաղց կա, որովհետև դրսում իրար վերահսկելու պահը չկա: Կին լինելը Հայաստանում շատ բարդ է: Կան կարծրացած դերեր, որոնցից այն կողմ դու չես կարող անցնել: Կին լինես ու չհանդիպես տղամարդու, կին լինես, ու ապրես սեռական կյանքով… Օ, աստված իմ: Բայց եթե տղամարդն է սեռական կյանքով ապրում, դա ոչինչ»:

Ըստ նրա՝ բնական է, որ ԼԳԲՏ մարդիկ ցանկանում են ընտանիք ունենալ. «Նույնասեռական անձինք նույնպես սոցիալական էակներ են: Սոցիալականը նույնքան կարևոր է, որքան անձնական կյանքը: Կարևոր է գործի տեղը չվախվխելը, որ հանկարծ մեկը քո անձնական կյանքի մասին չիմանա, կարևոր է սուրճի բաժակի շուրջ կարողանալ պատմել ընկերներիդ ինչ- որ բանի մասին: Եթե ուզում ես պատմել մի լավ ռեստորանի մասին, պետք է այնպես պատմես, որ բերանիցդ չթռչի, թե ում հետ ես գնացել: Միշտ պետք է հետևես՝ ինչ ես խոսում, ոնց ես խոսում: Դու չես կարող քո դիրքորոշումներն ազատ արտահայտել»:

Նա համոզված է ՝ ԼԳԲՏ հարաբերությունները հետերոսեքսուալ հարաբերություններից ոչ մի բանով չեն տարբերվում.«Քանի որ մենք շատ բռնությունների, ճնշման միջով ենք անցնում, շատ ավելի առողջ զույգեր են ձևավորվում: Այստեղ չկան դերեր, չկա ընտանիքի գլուխը, չկա հնազանդ հարսը: Կա հարգանքը: Մնացած առումներով այլ զույգերից չենք տարբերվում. նույն ձևով կռվում ենք, նույն ձևով նեղանում, նույն ձևով իրար սիրում»:

Ըստ նրա՝ ԼԳԲՏ մարդկանց հիվանդագին վերաբերվելը դարերի ընթացքում ձևավորված նախապաշարմունքների հետևանք է. «Ինչ-որ առումով ես հասկանում եմ դա: Ես չեմ

պատկերացնում՝ ոնց կարելի է տղայի սիրել: Տղայի մեջ ի՞նչ գրավիչ բան կա: Մյուս կողմից՝ հասկանում եմ, որ հետերոսեքսուալ աղջիկները չեն հասկանում, թե ոնց կարելի է սիրել և լինել աղջկա հետ: Ես հասկանում եմ, որ ինձ խորթ բանը կարող է կողքինիս հարազատ լինել: Հարգել մեկի միս ուտելու ցանկությունը և հարգել մյուսի չուտելու ցանկությունը հիմնաքարային բան է, որը մեր հասարակությունում չկա»:

Սակայն Անին համոզված է՝ մի օր այս անհանդուրժողականությունը կվերանա, որովհետև ԼԳԲՏ մարդիկ միշտ էլ գոյություն են ունեցել. դա արհեստականորեն ստեղծված երևույթ չէ. «Ես ինձ մեղավոր եմ զգում իմ ինքնությունը թաքցնելու համար: Մտածում եմ՝ ես եմ պատճառներից մեկը, որ իմ նմանները հասարակության մեջ կշտամբվում են: Անծանոթ երևույթից բոլորն էլ բնազդային վախ են ունենում: Իմ ամբողջ շրջապատը մտածում է, որ ինքը կյանքում նույնասեռական անձ չի տեսել: Նրանք մի պատկերացում ունեն գեյի մասին՝ կարճ շորտիկով, բարձրակրունկ կոշիկներով, տարօրինակ տղամարդ, կամ թևերի տակ լիքը մազ, մասկուլին աղջիկ, այսինքն՝ գենդերային դերերը խախտող, «վատ» մարդիկ: Նրանք իրականում շատ են տեսել ԼԳԲՏ անձանց, բայց չեն հասկացել: Եթե ես կամ մյուսները խոսեին այս մասին ու մարդիկ հասկանային, որ իրենց պատկերացումները սխալ են, գուցե շատ բան փոխվեր: Դրա համար մեծ ուժ է պետք: Պետք է մի օր որոշել ու անել դա»:

Լիլիթ Մարտիրոսյան. «Սա իմ մարմինն է. ես իրավունք ունեմ այն տնօրինելու»

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ի հիմնադիր, տրանս ակտիվիստ Լիլիթ Մարտիրոսյանը մասնագիտությամբ վոկալիստ է: Ավարտել է Կոմիտասի անվան կոնսերվատորիան: Իր կոչումը նա համարում է տրանս ակտիվիստ լինելը, որի միջոցով փորձում է փոխել ինչ-որ բան Հայաստանում:

Լիլիթն առաջին անգամ կանացի զգեստ հագել է 4 տարեկանում: Հիշում է, որ դա իրեն ավելի շատ էր դուր գալիս ու այդպես ավելի հարմարավետ էր զգում: Իր և իր եղբոր օրինակը նա բերում է՝ ապացուցելու համար, որ տրանս մարդկանց մասին պատկերացումները Հայաստանում սխալ են և ձևավորվել են կարծրատիպերի հիման վրա. «Ասում են, թե տրանս մարդիկ այդպիսին դառնում են դաստիարակության պատճառով: Ես ու եղբայրս ապրել ենք նույն տանը, նույն սնունդից ենք օգտվել, նույն հագուստներն ենք հագել, սակայն ես ունեմ իմ աշխարհայացքը, եղբայրս՝ իր: Մենք տարբեր ենք»:



Իր արտաքին տեսքի պատճառով Լիլիթն անընդհատ խտրական վերաբերմունքի էր արժանանում դպրոցում. «Ինձ ծեծում էին ուսուցիչները և աշակերտները: Միակ պատճառն այն էր, որ ես տարբերվում էի նրանցից: Ասում էին՝ եթե դու այդ շալվարով ես գալիս դասի, ուրեմն քո ընտանիքին ես վարկաբեկում, դպրոցի պատիվն ես գցում»:
Նույն վերաբերմունքը շարունակվեց բուհում. «Շատ տրանսեր կան, որոնք ընդամենը մեկ տարի հետո հասկանում են, որ չեն կարող այն մարդկանց մեջ մեծանալ, որոնք իրենց խտրականության են ենթարկում: Մարդը սովորի՞, թե՞ ճնշմանը դիմագրավի: Հաճախ նրանք հանձնվում են: Ես ուժեղներից մեկն էի, ու մինչև վերջ մնացի բուհում»:

Ընտանիքում նույնպես սկզբնական շրջանում խնդիրներ եղել են, բայց հիմա հարաբերությունները կարգավորվել են. «Մենք շփվում ենք: Բայց ամեն ծնող չէ, որ հասկանում է: Շատերն իրենց երեխաներին վռնդում են տնից, որովհետև ընտանիքի համար դա ամոթ է»:

Իր ինքնության հետ Լիլիթը կոնֆլիկտ ունեցել է այն ժամանակ, երբ հասկացել է, որ իր մարմինը չի համապատասխանում իր ներաշխարհին. «Իմ ներսում մի հոգի կա, որը չի ընդունում այդ մարմինը: Քիչ-քիչ վիրահատական միջամտությունների շնորհիվ հաղթահարվեց դա: Հիմա, երբ հայելու առջև եմ կանգնում, զգում եմ՝ իմ ֆիզիկականը համապատասխան է իմ ներքինին: Հիմա ավելի հանգիստ եմ ինձ զգում»: Իր ինքնության մասին պարտավորված չի զգում խոսել կամ որևէ մեկին բացատրել. «Սա իմ մարմինն է, ես իրավունք ունեմ այն տնօրինելու: Ես ապրում եմ այսպես: Աստված ինձ այսպես է ստեղծել՝ իմ գիտակցությամբ ու ես պատասխանատու եմ իմ մարմնի, իմ հոգու, իմ ապրելակերպի համար: Ես իրավունք չունեմ որոշելու, թե իմ հարևանը ոնց պետք է ապրի: Ամեն մարդ իր խղճի, օրենքի ու Աստծո առաջ հավասար է»:

Տարիների ընթացքում Լիլիթը զգացել է, որ տրանս մարդկանց խնդիրներն անտեսվում են: Նա ընդգծում է՝ տրանս անձանց խնդիրները ավելի սպեցիֆիկ են: ԼԳԲ մարդիկ արտաքինի տեսքի պատճառով ավելի քիչ են խտրականության ենթարկվում, քան տրանս

անձինք: Նրանք կարող են կրթություն ստանալ, հետո էլ՝ աշխատանք: Իսկ տրանս մարդիկ չեն կարողանում աշխատանքի ընդունվել. արտաքինը, ձայնը թույլ չեն տալիս դա: Այդ պատճառով տրանս մարդիկ Հայաստանում ստիպված են արտագաղթել կամ սեքս աշխատանք կատարել: Լիլիթը պատմում է, որ հաճախ իրենք ոստիկանների շանտաժների զոհն են դառնում. «Ասում են՝ եթե գումար չտաս, մենք այդ ամենի մասին կպատմենք քո ընտանիքին: Մարդը չի ուզում, որ ընտանիքը իմանա: Նույն բանը կատարվում է զինկոմիսարիատում: Մարդը գնում, ներկայանում է, հետո նրա մասին ամեն ինչ հայտնի է դառնում ընտանիքում, ընկերական շրջապատում»:

Լիլիթը որպես տուժող ներկայացված է եղել 26 քրեական գործում, այդ թվում՝ դանակահարություն, բռնություն, հայհոյանք: Նրա խոսքով՝ ոչ ոք դրանց համար պատիժ չի կրել:

Հայաստանում տրանս մարդկանց մյուս խնդիրը սեռափոխության և հորմոնաթերապիայի մասին օրենքի բացակայությունն է. «Աշխատանք չկա, բժիշկ չկա, վիրահատությունը օրինական չէ: Մարդիկ ստիպված կատարում են սեքս աշխատանք, մի կերպ փող են ստանում, գնում գաղտնի կերպով վիրահատվում են, հորմոնաթերապիա անցնում»: Լիլիթը համոզված է, որ եթե կրթության իրավունքը չոտնահարվեր, տրանս մարդիկ այլ ճակատագիր կունենային:

Այս խնդիրները մղեցին Լիլիթին 2016 թվականին հիմնելու հասարակական կազմակերպություն, որը կզբաղվի այդ հարցերով: Այսօր նա խոսում է 200-250 տրանս անձանց անունից, որոնք ապրում են ՀՀ-ում. «Նախկինում ասում էին, որ տրանս մարդիկ ՀՀ-ում գոյություն չունեն, իսկ մենք արդեն 6 անվանափոխություն ենք արել, այսինքն՝ արականը դարձել է իգական՝ ըստ օրենքի: Արդարադատության նախարարության հետ մեր համագործակցության շնորհիվ այսօր անունը փոխելու համար այլևս 3 վկա ներկայացնելու անհրաժեշտություն չկա»: Տրանսոֆոբիայի և հոմոֆոբիայի վերացումը Լիլիթը կապում է իրավապաշտպան և ակտիվիստ մարդկանց գործունեության հետ: «Հայաստանում բռնությունը շատ է և՛ կանանց, և՛տրանս կանանց նկատմամբ: Կինը տարիներով բերանը փակ պահած է ապրում, որովհետև ամոթ է բռնության մասին խոսելը. մարդիկ ի՞նչ կմտածեն: Եթե մենք ապրեինք մի հասարակությունում, որտեղ ամոթը վերացած լիներ և բոլորս արտահայտեինք այն, ինչ մեր ներսում է, մոլորակում խաղաղություն կհաստատվեր»,- ասում է Լիլիթը: Նա չի պատրաստվում երբևէ հեռանալ Հայաստանից. «Ես Հայաստանը շատ եմ սիրում: Ես պատրաստ եմ այստեղ մնալ և պայքարել տրանս մարդկանց իրավունքների համար մինչև խորհրդարան»:

Լուսանկարները՝ Լիլիթ Ավետիսյանի և Լիլիթ Մարտիրոսյանի անձնական արխիվից